

Հավելված
ՀՀ կառավարության 2021 թվականի
հոկտեմբերի 21-ի N 1733-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԴՐԱՄԱԳԼԽԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԵՎ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի (այսուհետ՝ դրամագլուխ) օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:

II. ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ

2. Օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված դրամագլխի հատկացումները կատարվում են ընդերքօգտագործողի կողմից՝ սույն կարգի համաձայն:

III. ԴՐԱՄԱԳԼԽԻՆ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՉԱՓԵՐԸ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

3. Դրամագլխին գումարները հատկացվում են նախնական հատկացման և ընթացիկ հատկացումների ձևով:

4. Նախնական հատկացման չափը հաշվարկվում է դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափի առնվազն 15 տոկոսի չափով և սահմանվում է ընդերքօգտագործման պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր): Հաշվարկման բազային չափն օգտակար հանածոների արդյունահանման նախագծով (այսուհետ՝ նախագիծ) կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով (այսուհետ՝ ծրագիր) կամ

պայմանագրով նախատեսված ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքն է:

5. Դրամագլխին նախնական հատկացումը կատարվում է պայմանագրի ստորագրման օրվան հաջորդող 30 աշխատանքային օրվա ընթացքում:

6. Ընթացիկ հատկացումները կատարվում են պայմանագրով ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար սահմանված վճարումների ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար, բացառությամբ պայմանագրի գործողության ժամկետի վերջին տարվա, պայմանագրով սահմանված ժամանակացույցով նախատեսված ժամկետներում:

7. Ընթացիկ հատկացումների չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$S\text{Հ} = \frac{ՀԲ - \text{ՆՀ}}{\text{Ժ}}$$

որտեղ՝

1) SՀ-ն դրամագլխին կատարվող տարեկան հատկացումների չափն է.

2) ՀԲ-ն դրամագլխին կատարվող հատկացումների հաշվարկման բազային չափն է.

3) ՆՀ-ն դրամագլխին կատարվող նախնական հատկացման չափն է.

4) Ժ-ն ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար վճարումների՝ սույն կարգի 6-րդ կետով սահմանված ժամկետն է (տարիներով):

8. Եթե հաշվետու տարվա արդյունքներով ընդերքօգտագործողի կողմից իրականացված և շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին թղթային կամ էլեկտրոնային եղանակով ներկայացված կատարողական ակտերով հավաստված ռեկուլտիվացիոն աշխատանքների գումարը գերազանցում է տվյալ ընդերքօգտագործողի ենթահաշվում առկա մնացորդի գումարը, ապա այդ դրական տարբերության չափով պակասեցվում է հաշվետու տարվան հաջորդող տարվա համար նախատեսված ընթացիկ հատկացման գումարը:

9. Պայմանագրով ընթացիկ հատկացումների կատարման ժամանակացույց սահմանված չլինելու դեպքում հատկացումները կատարվում են ընդերքօգտագործման իրավունքով սահմանված ժամանակահատվածի յուրաքանչյուր տարվա համար՝ մինչև հաշվետու տարվա դեկտեմբերի 20-ը:

IV. ԴՐԱՄԱԳԼԽԻՑ ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՂԻՆ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՈՒՄԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

10. Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար դրամագլխից գումար ստանալու նպատակով ընդերքօգտագործողը թղթային կամ էլեկտրոնային եղանակով շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում հաշվետու տարվա ընթացքում իրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալները՝ համաձայն կազմված կատարողական ակտերի:

11. Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարն իրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարողական ակտերն ստանալու օրվանից հետո՝

1) իրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ կատարողական ակտերին, նախագծին կամ ծրագրին կամ պայմանագրին համապատասխանության որոշման նպատակով 3 աշխատանքային օրվա ընթացքում կատարողական ակտերով ներկայացված տեղեկատվությունը տրամադրում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին.

2) սույն կարգի 12-րդ կետում նշված տեղեկատվության հիման վրա, այն ստանալուց հետո «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 46-րդ հոդվածով սահմանված ժամկետում ընդունում է ընդերքօգտագործողին ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար դրամագլխից կատարողական ակտերով ընդունված աշխատանքների նախահաշվային արժեքներին համապատասխան գումար տրամադրելու կամ մասնակի տրամադրելու կամ չտրամադրելու մասին հրաման: Գումարը տրամադրվում է տարեկան կտրվածքով:

12. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը սույն կարգի 11-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո 60 աշխատանքային օրվա ընթացքում շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում տեղեկատվություն՝ ընդերքօգտագործողի կողմից փաստացի իրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարողական ակտերին, նախագծին կամ ծրագրին կամ պայմանագրին ամբողջությամբ կամ մասամբ համապատասխանելու կամ կատարողական ակտերին, նախագծին կամ ծրագրին կամ պայմանագրին չհամապատասխանելու վերաբերյալ:

13. Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար գումար տրամադրելու, մասնակի տրամադրելու կամ չտրամադրելու մասին ընդունված հրամանի պատճենը շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից 1 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է ֆինանսների ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնին և 3 աշխատանքային օրվա ընթացքում, թղթային կամ էլեկտրոնային եղանակով, ընդերքօգտագործողին:

14. Շրջակա միջավայրի ոլորտի և ֆինանսների ոլորտի պետական կառավարման լիազոր մարմինների ու ընդերքօգտագործողի փոխադարձ համաձայնությամբ, փոխադարձ հաշվարկների ակտի ստորագրման միջոցով, դրամագլխից ընդերքօգտագործողին հաշվետու տարվա արդյունքներով ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար տրամադրման ենթակա գումարը կարող է հաշվանցվել որպես հաշվետու տարվան հաջորդող տարվա (տարիների) համար դրամագլխին հատկացման ենթակա ընթացիկ գումար:

**V. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՈԼՈՐՏԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԼԻԱԶՈՐ
ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԴՐԱՄԱԳԼԽԻ
ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ՌԵԿՈՒԼՏԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ**

15. Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը, հիմք ընդունելով օրենսգրքի 70-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, հրաման է ընդունում սեփական նախաձեռնությամբ, դրամագլխի միջոցների

հաշվին, ընդերքօգտագործողի կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների կամ դրանց մի մասի իրականացման համար անհրաժեշտ միջոցառումների ձեռնարկման մասին: Ընդունված որոշման մասին շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարը հրամանն ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում թղթային կամ էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է ընդերքօգտագործողին:

16. Շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի ղեկավարն իր նախաձեռնությամբ ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացումն սկսելու կամ շարունակելու մասին հրաման ընդունելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում դիմում է Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին՝ ընդերքօգտագործողի կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալների գնահատման նպատակով:

17. Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը սույն կարգի 17-րդ կետի 1-ի ենթակետով նախատեսված դեպքում 60 աշխատանքային օրվա ընթացքում շրջակա միջավայրի ոլորտի պետական կառավարման լիազոր մարմին է ներկայացնում տեղեկատվություն ընդերքօգտագործողի կողմից չիրականացված ռեկուլտիվացիոն աշխատանքների ծավալների գնահատման վերաբերյալ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ